Հաստատում եմ

Տնօրեն՝ [signature] Ա.Ղազումյան

«31» օգոստոսի 2023թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

Լոռու մարզ   ք. Վանաձոր

Վ. Համբարձումյանի անվան թիվ 25 հիմնական դպրոց, 9բ դասարան

Ղարադաղյան Արմենուհի Մարգարի

« 2023- 2024 » ուսումնական տարի

# ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)
   2023-2024 ուստարում դասարանում սովորում է  աշակերտ,որից 14 աղջիկ, 15 տղա; Աշակերտները լավ առաջադիմությամբ փոխադրվել են 9-րդ դասարան;Խելացի են, կա մրցակցություն; Հարգում և լսում են միմյանց;Հետևում են աշակերտի պարտականությունների հստակ կատարմանը;
2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ
   2022-2023 ուստարում դպրոցի ներքին կանոնադրությամբ մշակվել է ուսումնադաստիարակչական աշխատանքների ծրագիր, որին ակտիվորեն մասնակցում է 9-րդ դասարանը, դասարանի ներքին կանոնակարգը կազմվել է դրա հիման վրա; Նախատեսվում է զրույց ստեղծված իրավիճակի շուրջ, ինչքանով են տեղեկացված աշակերտները;

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն

Որպես հայ քրիստոնյաներ, հայ երեխաները պետք է ճանաչեն հայ առաքելական եկեղեցու պատմությունը, կրոնի ընդունման պատմությունը և դավանանքը, իմանան եկեղեցական տոներն ու դրանց խորհուրդը; Կունենանք այց եկեղեցի, որտեղ երեխաները կստանան հոգևոր սնունդ;

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Զևավորել դասասենյակը, սեփական հանդերձանքին ու հիգենային դարձնել առանձնահատուկ ուշադրություն; Տանել զրույց վարվեցողության , կեցվածքի, հարգանքի շուրջ, լսել աշակերտների կարծիքները;

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն

..Հայրենիքն իմ տունն է.. սա դեռ վաղ հասակից պետք է սերմանել երեխայի մեջ; Զրույցները, միջոցառումները էլ ավելի կխորացնեն սերը հայրենիքի հանդեպ, կճանաչեն ազգի հերոսներին;

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Երեխաներն ակտիվ մասնակցում են ֆիզկուլտուրայի դասերին; Աշակերտների մեծ մասը հաճախում են մարզադպրոցներ և գտնվում են մարզական լավ վիճակում;

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը, աշխատավոր մարդը; Տալ աշակերտին այն գաղափարը , որ կարողանա գոյատևել ներկայիս դժվար պայմաններում;

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Դասղեկի ժամերից հատկացնել բնապահպանական թեմաներին, շրջապատի մաքրությանը, բացատրել ջերմոցային էֆեկտները, գլոբալ տաքացումները, դրանց պատճառները և հետևանքները;

4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Ամուր ընտանիքը հզոր հայրենիքի հիմքն է ; Դպրոց- ընտանիք- աշակերտ կապը երեխայի ճիշտ ձևավորման հիմնական գրավականն է; Որքան ամուր լինի հիմքը, այնքան ուժեղ և հավասարակշռված երեխա կձևավորվի;

## ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ուսումնական շաբաթները | | Կատարման ժամկետը | Կատարողներ |
|---|---|---|---|
| I | Բոլորին ապահովել դասագրքերով:<br>Դասարանական կազմի ընտրություն: | | |
| II | Դասարանում ստեղծել կազմակերպական անկյուն, ծանոթացնել դպրոցի ներքին կանոնադրությանը: | | |
| III | Զրույց Վիկտոր Համբարձումյանի ծննդյան առթիվ: | | |
| IV | Զրույց նվիրված անկախության տոնին:<br>Հարգանքի տուրք զոհվածների հիշատակի պուրակում | | |
| V | Միջոցառում նվիրված ուսուցչի տոնին: | | |
| VI | Զրույց – երկխոսություն ՝ ինչպիսին եմ տեսնում ինձ իններորդ դասարանում: | | |
| VII | Վարքագծի կանոնների, աշակերտի պարտականությունների ու կեցվածքի քննարկում: | | |
| VIII | Զրույց «Առողջ հոգին առողջ մարմնում» | | |
| IX | Քննարկում « Մարդը և օրենքը» թեմայով | | |
| X | Ասմունքում են աշակերտները աշնան թեմայով: | | |
| XI | Առաջադիմության ընթացիկ գնահատականների քննարկում: | | |
| XII | Բանավեճ՝ «Վատ և լավ սովորություններ» | | |
| XIII | « Բարեգործություն» զրույց աշակերտների հետ: | | |
| XIV | Ամանորյա նախապատրաստական աշխատանքներ, դասարանի ձևավորում | | |
| XV | Հոգեբանական թեստ՝ «Հոգեվիճակի վերլուծություն» | | |
| XVI | II –րդ կիսամյակում նախատեսվող աշխատանքների քննարկում; | | |
| XVII | Զրույց Հովհաննես Թումանյանի ծննդյան օրվան նվիրված; | | |

| | | | |
|---|---|---|---|
| XVIII | Գրքի քննարկում | | |
| XIX | Հայոց բանակի տոնին նվիրված զրույց; | | |
| XX | Լրացնել խաչբառեր, անցկացնել ինտելեկտուալ խաղեր | | |
| XXI | Աշակերտների մասնակցությունը օլիմպիադաներին: | | |
| XXII | «Օրվա ռեժիմը և իմ առօրյան»« քննարկել օրվա ռեժիմի ճիշտ կազմակերպումը: | | |
| XXIII | «« Ես սիրում եմ իմ հայրենիքը»<br>« Ես ապագա զինվոր եմ»« ստեղծագործում են աշակերտները: | | |
| XXIV | Դաս- միջոցառում նվիրված մայրերի ու կանանց միջազգային օրվան: | | |
| XXV | Զրույց – շարադրություն «, Ինչպիսին եմ ուզում տոսնել իմ քաղաքը». | | |
| XXVI | Նկարչական մրցույթ գարնանային մոտիվներով; | | |
| XXVII | Բանավեճ՝ « Արդարացի և անարդար արարքներ» | | |
| XXVIII | Արցախյան պատերազմը հայոց պատմության էջերում, հայ ժողովրդի գոյամարտը: | | |
| XXIX | Դաս- միջոցառում «Զատիկ» | | |
| XXX | Ցեղասպանության զոհերի հիշատակի օր; | | |
| XXXI | Մայիսյան հերոսամարտեր, հայազգի հերոսներ: | | |
| XXXII | Առաջադիմության ընթացիկ գնահատականների քննարկում: | | |
| XXXIII | Զրույց՝ «Ի՞նչ են պատմում ընտանեկան լուսանկարները» | | |
| XXXIV | Կիսամյակի ամփոփում: | | |